# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**29 հունվարի 2018 թվականի N 22-Ա**

## «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.16-րդ կետերով և հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2018 թվականի հունվարի 23-ի N 17-Ա կարգադրությունը՝

**կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.**

1. 2018թ. հունվարի 29-ից «Սյունիքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Անժելա Թումանյանին, ազատելով նրան «Տանձավերի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

2. «Սյունիքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Աշոտ Ասրյան | Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ) |
| Վովա Այվազյան | Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ |
| Տիգրան Գևորգյան | Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջին կարգի մասնագետ: |
| Գարիկ Հարությունյան | Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ |

3. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում, արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Վ. ՀԱԿՈԲՅԱՆ